

միջոցի և մատնացոյց էր անում կրկին այդ յիշատակարանի ազդեցութեան վերայ՝ յիշատակարանը քննելու ժամանակ:

Աւելի առատ պատուցներ էր տալիս՝ յիշատակարանին ծնունդ տուող միջավայրի նկարագրութիւնը, այսինքն՝ հասարակութեան իւր կուլտուրական պայմաններով հանդերձ, Գորանից ամենից աւելի շահուեց պատմութիւնը և այն հոսանքով մտան նորա մէջ՝ որպէս պատմական աղբիւրներ — զանազան դարաշրջանների և աղբիւրի գրականական և գեղարուեստական յիշատակարանները: Օրինակ, Խընօ գը Մոնտորանի վիպասնական քերթուածի համառօտ տեսութիւնը Տէնի գրչի տակ տուաւ մի կենսավառ հոգեբանական պատմութիւն սկզբնական շրջանի ֆէօդալական հասարակութեան, որի մասին այնքան քիչ ուղղակի տեղեկութիւններ կան — կարծես կենդանի լեզուով խօսեցին մեռեալ սրբազրեր (հիերոգլիֆներ), ասում է պրոֆ. Գերիէն: սրբագրերն որ գեռ ոչ որ չէր կարգացել, Իսկ Ռասինի թատրոնի քննութիւնը, շարունակում է ուսս գիտնականը, Լուդովիկոս XIV-ի ժամանակուայ սալոնների հասարակութեան մի այնպիսի լիակատար բնաւորագրութիւն է դառնում, որին չէր կարող գերազանցել ոչ մի պատմական նկարագիր, ուղիղ պատմական վկայութիւնների վրայ հիմնուած:

Ե. ՄԱԿԱԹԵԱՆ:



Հ Ե Ռ Ա Գ Ի Ր :

ՊԵՏԵՐՐՈՒՐԳ .

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՐՈՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ .
Եյսօր բոլոր հոգևորական դասի հետ մաղթանք կատարելով՝ Ն. Կ. Ի. ԹԵԳԵՒՈՐ ԺԱՌԱՆԳԻՆՈՐ ՈՒՐԱԽԱՂԵ նշանադրութեան առիթով և աղաչելով պսակի երկնային Սահմանողեց պարգևել ԹԵԳԵՒՈՐ ԺԱՌԱՆԳԻՆՈՐ և բոլոր ՕԳՈՍԵՓԵՌ ԳԵՐԳԵՍԵՆԻՆ երկարակեցութիւն և բարօրութիւն ի բարեբաղդութիւն և ի փառս մեծի Ռուսիայի խնդրում եմ Ձեր Բ. Գերազանցութիւնից՝ սիրել Ն. Մ. ԹԵԳԵՒՈՐ ԿԵՅՍԵՐ Գահոյքի առաջ ՄԵՐ ուրախութեան և խորին փառաբանութեան զգացմունքը:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ .

Ապրիլի 19:

Պ Ե Տ Ե Ր Ր ՈՒ Ր Գ

Պ. ՆԱԽԱՐԱՐԻՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ .

ԹԵԳԵՒՈՐ ԺԱՌԱՆԳԻՆՈՐ
Ծննդեան մեծահանգէս օրն ջերմաջերմ՝ աղօթքներ վեր ուղղելով, մաղթանք կատարելով, ԹԵԳԵՒՈՐ ԿԵՅՍԵՐ, ԹԵԳՈՒՀՈՒ և ԹԵԳԵՒՈՐ ԺԱՌԱՆԳԻՆՈՐ առողջութեան, երկարակեցութեան և բարեբաղդութեան համար, խընդրում եմ Ձեր Բարձր Գերազանցութիւնից՝ սիրել ՆՈՐԻՆ ԿԵՅՍԵՐԵԿԵՆ ՄԵՃՈՒԹԵԼՆ Գահոյքի առաջ ԻՄ և ԻՄ Հօտի անսասանելի հաւատարմութեան և անձնուիրութեան զգացմունքը:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Մայիս 6:

Նորին Վեհափառութիւնը կանոնաւոր ընթացքի մէջ դնելու համար աղքատներին դրամական նպաստով օգնելու գործը բարեհաճեց նշանակել մի յանձնաժողով
հետեւեալ ս. կոնդակով:

ՄԿՐՏԻՉ ԺԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔԵՆ ԱՍՏՈՒԹՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԵՍՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԺԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷԶՄԻՍԵՆԻ:

Գանձապահի Սրբոյ Ըթոռոյս Ըրժանապատիւ Վահան Վարդապետի հէր-Գրիգորեան, սիրելոյ Մերոյ յայտ առնեմք:

Ի մօտոյ իսկ տեսանեմ և նկատեմ զի միայնակ ծանրաբեռնեալ է ի վերայ Ձեր մատակարարութիւն և բաշխումն տրոց առ աղքատս, որք գունդազունդ դիմեն ի Մայր Ըթոռ թէ ի գաղթականաց և թէ ի տեղական ժողովրդոց. ուստի բարւոք դատեցի կազմել զմի մասնա-

ժողով՝ Չեզ իբրև օժանդակ և գործակից, որոց անդամք են հետևեալ միտքան անձինք. Սահակ ծ. վարդապետ Եյփատեան, Կերսէս վարդապետ Հայկազունի, Սահակ վարդապետ Էմատունի և Յուսիկ Սարկաւազ՝ որ կարող է վարել զպաշտօն քարտուղարի, զորս պարտ է հրաւիրել և ընդ նախագահութեամբ Չեզով անօրինել զամենայն հանգամանս մատակարարութեան:

Պատուիրելով պատուիրեմ՝ քըննապէս ստուգել զլիճակ թշուառ աղքատաց և սովելոց, ճիշտ և արդար մատակարարել զի մի՛ լինիցի ումիք զզկանս և խտրութիւն. Իսկ Լչս աղօթեմ՝ զի ընդունիցին իւրաքանչիւր վարձս ի Տեառնէ, նախ գթասիրտ և ազնուասիրտ անձինքրն այնոքիկ, որ յամենայն կողմանց փութացին և փութան օգնել և հաց տալ քաղցեալ ժողովրդեան, և ապա դուք՝ որ մատակարար լինիք ծաւայել սեղանոյ աղքատաց, նոյն Լստուածատուր վարձուց արժանի լինիջիք. ամէն:

Ի 27 ապրիլի 1894

(Ս տ ո Ր ա զ Ր ե ա Ն)

և ըստ տոմարիս ՌՅԼԵԳ

համար 558

Մ Կ Ր Տ Ի 2

Յնքարտուուն Կարգ ԸՍտ.

Ս. Էջմիածնի.

Կ Ը Թ Ռ Է Լ Ի Կ Ո Ս

ի վաղարշտպանո.

Ը մ ե ն ա յ ն Հ ա յ ո յ ց .



Նորին Ս. թծութիւն վեհ. Հայրապետն ամենայն Հայոց, Գեր. Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանցին Ատրպատականի ընդհանուր առաջնորդ կարգելով, մի առանձին գրութեամբ առ Արեղակնափայլ Դահն Պարսից և առ Սաղբազամն յանձնարարած էր զՆորին Գերապատուութիւնն Նորին Մեծութեան բարեհաճ խնամոցը:

Ի պատասխանի իւր գրութեանց Նորին Ս. թծութիւնը ստացաւ յետագայ պատասխանազրկները Նորին Մեծութիւն Դահն Պարսից և Նորա Սաղբազամից:

Թարգմանութիւն Հրովարտակի Արեղակնափայլ Դահն Պարսից առ Սրբազնագոյն Կաթողիկոսն Ամենայն Հայոց. Տ. Տ. Մկրտիչ:

Կնիք Նորին Մեծութեան
Սասր Էղղին Դահն

Նորին հրեշտակատիպ Եպիսկոպոսապետն Կրօնաւորացն Յիսուսի մեծն ի մեծափառ պաշտօնէից Մեսիայի կաթողիկոսին կաթողիկոսաց Մկրտչի Առաջնոյ Մեծի Հայրապետն ամենայն Հայոց՝ որ ի սփիւռ աշխարհի տրժանացեալ Աստուածային շնորհաց, ընդ որս նաև փաստակեալ ըստ ամենայնի զարժանաւորութիւն Մեր և հասեալ Մերումն արեղակնափայլ սիրոյ յիշատակութեան:

Ի համբառնան Չեր գերերջանիկ անձին ի Գահ Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի յայտառնէիք մեզ զընտրեալն ի Զէնջ զԳեր. Սուքիաս Արքեպիսկոպոս յառաջնորդութիւն վիճակին Ատրպատականի վասն հովուելոյ և առաջնորդելոյ զՀայազգի ժողովուրդն Ատրպատականի՝ որ ընդ հովանաւորութեամբ Մերով բարձր իշխանութեան: Վասն այսր ամենայնի զյղեալն առ Մեզ զգրութիւն Չերդ Սրբութեան ընթերցաք, և յառաջնում պարբերութեան այդր գրութեան Չերում՝ յորում յիշատակէք զընտրութիւն Չեր յԱթոռ Հայրապետութեան ամենայն Հայոց՝ լիասիրտն ուրախացոյց զմեզ: Վասնորոյ ի խորոց սրտի շնորհաւորեմք և մաղթեմք առ բարձրեալն Աստուած, զի զբարձրութիւն Չեր բազում ամաց, և որպէս առաջընթաց հովուապետ ազգին Հայոց մեծապանծ պատուոց արժանացուցէ, տացէ Չեզ Աստուած կար և զօրութիւն վասն լիակատար գործադրելոյ զամենայն տրամադրութիւնն կրօնի:

Յերկրորդում պարբերութեան գրութեան Չերում՝ յորում յիշատակէք զընտրութիւն Սուքիաս Արքեպիսկոպոսին յառաջնորդութիւն Ատրպատականի, ըստ Չեր փափագանաց ծանեաք և ընկալաք զՆորին Գերապատութիւն, և հրովարտակա հրամայեցաք ամենայն կառավարաց Բարձրագոյն Թագա-